ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԿԱՐԷՆ ՄԿՐՏՉԵԱՆ ՈՐ Ի ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ՌՈՒ

Համայն հայոց նուիրական սրբօրրանից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրեալ զաւակիդ:

Յարգարժան Պրն. Մկրտչեան,

Քաջալերեալ ենք եկեղեցանուէր Ձեր ընթացքի մասին, որով գովարժան ներդրում էք բերում՝ ի շահ մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան եւ հայոց ազգային-եկեղեցական կեանքի պայծառութեան: Հայրապետիս համար գոհունակութիւն է անդրադառնալ, որ Ձեր կեանքի ճանապարհը բարեզարդում էք եկեղեցաշէն եւ ազգաշահ գործերով: Պատրաստական յանձնառութիւններով ու ծառայութիւններով Դուք մեծապէս աջակից էք Սանկտ Պետերբուրգի հայ համայնքում մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան արդիւնաւորմանը:

Մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կեանքի պայծառութեանը գովելի աւանդ բերելու ազնիւ մղումով Դուք նաեւ առատաձեռն նուիրաբերութիւն կատարեցիք՝ ի խնդիր Արմաւիր քաղաքի եկեղեցու կառուցման հոգեշէն ու ազգանպաստ ծրագրի իրագործման, արտայայտելով Ձեր հոգու մշտավառ հաւատքը, ջերմ սէրն ու նախանձախնդրութիւնը հանդէպ սրբազան մեր արժէքները: Աստուածահաճոյ բարեգործութեամբ Դուք Ձեր եւ Ձեր ընտանիքի անունը կապեցիք նորակառոյց եկեղեցու պատմութեանը՝ արժանանալով Աստուծոյ հաճութեանն ու օրհնութիւններին: Ձեր ջերմ եկեղեցասիրութիւնը վկայող նշանակալի ներդրումով կառուցուած գեղեցկակերտ եկեղեցին մեծ կարեւորութիւն է ունենալու թեմում՝ լինելով լուսաւոր կենտրոն ազգային ու հոգեւոր կեանքի:

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր գովելի ծառայութեանց բարձր գնահատանքով եւ ընդառաջ Արմաւիրի թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ

Տ. Սիօն եպիսկոպոս Ադամեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Իջման Սուրբ Սեղանի առջեւ Մեր աղօթքն է, որ Տէրը հանապազ օրհնու-

թիւն բաշխի Ձեզ եւ Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքոյ շէն ու երջանիկ պահի ու պահպանի ընտանեկան Ձեր յարկը՝ շնորհելով յարանորոգ յաջողութիւններ հայրենանուէր ու եկեղեցաշէն Ձեր բարի գործերին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 29-ն Մայիսի
Յամի Տեառն 2014 եւ ի թուին հայոց ՌՆԿԳ.
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 850